

Ա. Ի. ԴՈՐՐՈՒՈՏՈՎԱ

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ
ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՄԱՌԱՅԻՆ
ԼՈՒԾԵՐԻՑ



616.3
Դ-66

ՀԵՍՀ ՊԵՏՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1938

28 JUL 2010

616.3
7-65,
այլ

Ա. Ի. ԴՈՐՐՈՒՈՏՈՎԱ

ԻՆՉՊԵՍ ՊԱՃՏՊԱՆԵԼ
ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՄԱՌԱՅԻՆ
ԼՈՒԾԵՐԻՑ



ՀԵՍՆ ՊԵՏԶՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ

1938

Գրքույկի հեղինակը մատչելի ձևով շարագրում և
յերեխաների լուծերով հիվանդանալու պատճառները
և մանրամասն ցուցումներ տալիս, թե ինչպես պետք
է պաշտպանել յերեխաներին հիվանդանալուց: Գրք-
ույկը գրված է մասսայական, առավելապես գյու-
ղական ընթերցողի համար:



3006
38

ՊԱՅՔԱՐԸ ԱՄԱՌԱՅԻՆ ԼՈՒԾԵՐԻ ԴԵՄ—ՊԱՅՔԱՐ Ե
ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Ցարական Ռուսաստանը մանուկների հիվանդա-
ցումների և մահացությունների տեսակետից գրավում
էր առաջին տեղերից մեկն ամբողջ աշխարհում. 100
նորածնից ամեն տարի մեռնում էր մինչև 30 յերե-
խա, և նրանց մեծ մասը մեռնում էր ամառային
լուծից: Խորհրդային իշխանությունը հսկայական հա-
ջողությունների հասավ յերեխաների հիվանդացու-
մների ու մահացությունների դեմ մղվող պայքարում:
մանկական մահացությունները մեր յերկրում, նա-
խապատերազմյան շրջանի համեմատությամբ, պակա-
սել են համարյա յերկու անգամ: Մասնավորապես
զգալիորեն իջել է նաև մահացությունն ամառային
լուծից: Բայց և այնպես մենք չենք կարող բավարար-
վել արդեն ձեռք բերած հաջողություններով և պետք
է պայքարենք յերեխաների մահացությունների հա-
տագա իջեցման համար:

Մոցիալիզմի հաջող կառուցման հետևանքով մեր
յերկրում անընդհատ բարելավվում է բնակչության
նյութական-կենցաղային դրությունը, աճում է կուլ-
տուրական մակարդակը և բարձրանում սանիտարա-
կան գրագիտությունը: Այս բոլորը բարենպաստ պայ-

մաններ են ստեղծում մեզ մոտ յերեսաների հիվանդացումները և մահացությունների հետագա իջեցման համար:

Մենք ունենք ծննդաբերության վիթխարի աճ: Խորհրդային Միության միլիոնավոր փոքրիկ քաղաքացիները պահանջում են ել ավելի մեծ ուշադրություն նրանց առողջության համար մղվող պայքարին, յերեսաների հիվանդացումներն ու մահացություններն իջեցնելու համար մղվող պայքարի հարցերին, այդ թվում նաև ամառային լուծերի դեմ մղվող պայքարին: Ինքնին հասկանալի չէ, Վոր ամառային լուծերի, վորպես յերեսաների մահացությունների գլխավոր պատճառներից մեկի դեմ մղվող ակտիվ պայքարը մտնում է մայրության ու մանկության պահպանության բոլոր հիմնարկների, այդ թվում նաև մսուրների պարտականությունների մեջ:

Աբորտներն արգելելու վերաբերյալ կառավարության 1936 թ. հունիսի 27-ի վորոշումը նախատեսում է մսուրների ցանցի լայն տարածում:

Գյուղական վայրերում գոյություն ունեցող մսուրային մահճակալների ցանցը կոլխոզների ինչպես մըշտական, այնպես ել սեզոնային մսուրներում առ 1 հունվարի 1939 թ. պետք է կրկնապատկվի, մահճակալների թիվը մշտական մսուրներում պետք է ավելացվի 500 հազարով, իսկ սեզոնային մսուրներում՝ 4 միլիոնով:

Մսուրների քանակական աճի հետ միասին զուգընթացաբար պետք է անպայման բարձրանա նաև աշխատանքի վորակը մսուրներում: Այս անհրաժեշտ պայմանն է մանկական վարակիչ հիվանդությունները,

այդ թվում նաև ամառային լուծերի դեմ հաջողությամբ պայքարելու համար:

Մսուրային աշխատողները պետք է դիտակցեն ամառային լուծերի դեմ մղվող պայքարի վորջ կարևորությունը. նրանք պետք է իմանան, թե ինչ են ամառային լուծերը, ինչպիսի պայմաններում են նրանք առաջանում, ինչպես պետք է պայքարել նրանց դեմ և ինչպես կանխել նրանց տարածումը: Մակայն մենակ այդ դեռ բավական չէ: Պետք է այդ դիտելիքները վոր միայն կիրառել մսուրներում յերեսաներին խնամելու ժամանակ, այլև պետք է այդ դիտելիքներն արմատացնել բնակչության լայն մասսաների մեջ, պետք է հասնել այն բանին, վոր յերեսաների համար վտանգավոր ամառային լուծերի դեմ պայքար մղվի և՛ մսուրներում, և՛ տանը՝ ընտանիքում: Միայն հմուտ և համառ պայքարի շնորհիվ մսուրները կկարողանան գործնականում ցույց տալ իսկական ոգնությունը մանուկ բնակչության հիվանդացումներն ու մահացություններն իջեցնելու գործում:

ԻՆՉ ԵՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԼՈՒԾԵՐԸ

Մանկական ամառային լուծերը լինում են յերեք տեսակի՝ հասարակ լուծ — դիսպեպսիա, ընդհանուր ծանր յերևութիւներով լուծ — տոնիկ դիսպեպսիա (մանկական խոլերա) և արնալուծ — դիզենտերիա: Յուրաքանչյուր հասարակ լուծ անբարենպաստ պայմաններում, հիվանդներին անկանոն խնամելու դեպքում կարող է վերածվել ծանր լուծի, վորը և կհասցնի յերեսայի օրգանիզմի ընդհանուր թունավորման:

Հատարակ լուծ.— Ամենից հաճախ հիվանդությունն սկսվում է աստիճանաբար, սակայն լինում են դեպքեր, յերբ լուծն սկսվում է միանգամից. յերեխան սկսում է հաճախ կեղտոտել: Առողջ յերեխան սովորաբար կեղտոտում է որական 1—2 անգամ, իսկ լուծերի ժամանակ՝ 10) և ավելի անգամ: Լուծերի ժամանակ փոխվում է նաև կղանքի տեսքը: Կրճքով կերակրվող յերեխաների կղանքը լինում է դեղին գույնի ունենում է թթվահոտ, քսմավում է բարուրին՝ հազով թրջելով այն. կովի կաթով կերակրելու դեպքում կղանքը լինում է մի քիչ ավելի գունատ ու պինդ:

Լուծերի ժամանակ կղանքի մեջ մի դեպքում շատ են լինում կանաչը և սպիտակ գնդիկները, մյուս դեպքում կղանքը լինում է փրփրավուն, կանաչ, ծանր դեպքերում՝ բոլորովին ջրիկ, կանաչավուն, փաթիլների խոռոկերով:

Լուծին միանում են զկատոցներն ու փսխումները: Սկզբում փսխումը լինում է որական 1—2 անգամ: Հետագայում կարող է սաստկանալ և սկսվել ամեն անգամ ջուր կամ կաթ կուլ տալուց հետո: Այս ցույց է տալիս, վոր հասարակ լուծը դառնում է ծանր ցեւտակի լուծ:

Լուծի և փսխումների սաստկանալու հետ փոխվում է յերեխայի ամբողջ տեսքը: Նրա դեմքը վարդագույնից դառնում է գորշ, հողագույն: Թմփրիկ մարմնիկը չորանում է: Մաշկն աճուկներում հավաքվում է ծալքերով: Դիմագծերը սրվում են, աչքերը՝ խորն ընկնում, աչքերի շուրջը մուգ շրջանակներ գոյանում: Անոթերն ու վտոքերը սառն են: Չայնը խոպոտ կամ

անհնչուն. գաղտունը (родничок) խորն է ընկնում: Յերեխան թուլանում է, թառամում և անտարբերորեն նայում հեռուները (նկ. 1): Շատ հաճախ յերեխան այդ դրության մեջ էլ մեռնում է:



Նկ. 1. Լուծից հյուսված յերեխա

Յերբ հիվանդությունը ձգձգվում է, նրան միանում են մի շարք այլ բարդություններ. յերեխայի աչքերն սկսում են թարախոտել, այնուհետև յեղջրենու մակերեսին կարող են յերևան գալ փոքրիկ խոցեր, վորոնք հետագայում, յերեխայի առողջանալու դեպքում դառնում են հատեր:

Մաշկի վրա, առանձնապես հաճախ գլխի և հետույքի վրա յերևան են գալիս հարուկներ, պառկելախոցեր ու թարախակույտեր: Վոչ սակավ միանում են թոքերի բորբոքումը և թարախահոտությունը ականջներից: Այդպիսի յերեխային դժվար է փրկել: Առողջանալու դեպքում էլ յերեխան յերկար ամիսներ թույլ ու նվազ է մնում: Յերեխայի ուժերը վերականգնելու համար պահանջվում է շարաթներով ու ամիսներով անխոնջ կերպով հոգ տանել նրա մասին:

Արևալուծ (դիզենտերիա).— Արնալուծի սկիզբը կա-

րող և տարբեր լինել: Մի դեպքում նա հանկարծ ե սկսվում, յերեխայի լիովին առողջ ժամանակ: Դեռ առավոտյան յերեխան ուրախ եր, լավ ուտում եր, բայց յերեկոյան ջերմաստիճանը բարձրանում ե և կղանքի մեջ լորձ ու արյուն ե յերևում: Ուրիշ դեպքերում լուծը զարգանում ե դանդաղ—մի քանի օրվա ընթացքում: Այդ ձևով հիվանդանալու ժամանակ յերեխան դուրս ե գնում յերբեմն օրական 30 և ավելի անգամ: Արտաքին տեսքով կղանքը միշտ ել, նույնիսկ միևնույն օրը, միատեսակ չի լինում. մեկ նա ամբողջապես բաղկացած ե լորձից ու արյունից, մեկ հիշեցնում ե գորտնկիթը. նրա մեջ մեծ քանակութլամբ լամբ լորձ ու կանաչ կա: Յերբեմն կղանքի մեջ, բացի լորձից ու արյունից, նաև թարախ ե յերևում: Կուսները շատ հաճախակի յեն, բայց քիչ: Ուրիշ դեպքերում բարուրի վրա մնում ե միայն մուգ-շագանակագույն մի փոքրիկ բիծ:

Արնալուծի ժամանակ յերեխաների համար առանձնապես տանջալից ե այն, վոր յերեխան մշտապես դուր ե տալիս, նրան «դեպի ներքև ե ձգում»: Ավելի մեծ յերեխաները պատրաստ են ամբողջ օրը նստել պետաքանոթի (горшок) վրա: Դուրս գնալու ցանկութլությունները հիվանդագին են: Յերեխան կուչ ե գալիս ցավերից ու գոռում:

Հազվադեպ չե, վոր այդ ցանկութլությունների ժամանակ լայնորեն բացվում ե սրբանը (հետանցք) և դուրս ե պրծնում աղիքների ներքևի մասը—ուղիղ աղիքը:

Արնալուծը չափազանց ծանր վարակիչ հիվանդու-

թյուն ե, նա հաճախ մահվան ե հասցնում յերեխային, կամ սաստիկ հյուժում նրան:

Այս հիվանդութլունը չափազանց վարակիչ ե: Կարող ե փոխանցվել վոչ միայն յերեխայից յերեխային, այլև յերեխայից մեծահասակներին և, ընդհակառակը՝ մեծահասակից յերեխային:

ԱՄՍՈՒԱՅԻՆ ԼՈՒԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՏՃԱՍՈՐ ՄԻԿՐՈԲՆԵՐՆ ԵՆ


Մեր շուրջը՝ ողի, ջրի, հողի մեջ ապրում են հսկայական քանակութլամբ չափազանց մանր եյակներ—միկրոբներ, վորոնք հասարակ աչքով անտեսանելի յեն: Միկրոբներին կարելի չե տեսնել միայն խոշորացնող ապակիներից շինված գործիքի—միկրոսկոպի (մանրադիտակի) միջոցով. հասարակ աչքով միկրոբները տեսանելի, նկատելի յեն լինում, յերբ նըրանք շատ են: Ահա, օրինակ, յեթե մի մութ կամ տաք տեղ դնենք ջրի մեջ թրջած հացի կեղևը, ապա 1—2 օրից հետո այդ կեղևը կծածկվի գորշ-կանաչագույն խավար փառով: Այդ բորբոսն ե, այսինքն, միկրոբների մի ամբողջ կույտ, վորն առաջացել ե առանձին միկրոբներից, վորոնց մենք առանձին-առանձին չեյինք կարող տեսնել:

Ահա և մի ուրիշ օրինակ.—տաք յեղանակին սենյակում թողած մսաջուրը (բուլյոն) սովորաբար մի օրից հետո պղտորվում ե և նեխածահոտ ստանում: Սա ևս առաջ ե գալիս միկրոբների գործողութլունից:

Յերբ միկրոբները սննդի հետ ընկնում են յերեխայի ստամոքսն ու աղիքները, այնտեղ նրանք բազմանում են և լուծ առաջացնում:

Գոյութիւնն ունեն զանազան տեսակի միկրոօրններ (նկ. 2):

Ծծկեր յերեխաների համար չափազանց վտանգավոր են աղիքային միկրոօրնները: Այս միկրոօրններն ապրում են մարդկանց և կենդանիների աղիքների ստորին մասերում և միլիարդներով դուրս են գցվում կղանքի հետ: Աղիքային միկրոօրնները գտնվում են ամեն տեղ, ուր կարող են տարվել կղանքի թեկուզ ամենաանշաան մասնիկները: Առանձնապես վտանգավոր են լուծով հիվանդ մարդկանց աղիքային միկրոօրնները:



Նկ. 2. Վարակիչ հիվանդութիւնների միկրոօրնները

ԱՂԻՔԱՅԻՆ ՄԻԿՐՈՐՆԵՐՆ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԸՆԿՆՈՒՄ ՅԵՐԵՆԱՅԻ ԱՂԻՔՆԵՐԻ ՄԵՉ

Ամենից հաճախ աղիքային միկրոօրններով կեղտոտվում է կաթը՝ կթելու ժամանակ:

Գոմը վատ պահելու դեպքում կովի կուրծն ու պոչը կեղտոտվում են աղիքային միկրոօրններով: Մաքրասեր կթողը կթելուց առաջ չեռացրած սառը ջրով ուշադրութեամբ լվանում է կովի կուրծն ու պտուկները: Իսկ յեթե այդ չի արվում, ապա կովի կեղտոտ պոչից, վոր սովորաբար շարժում է նա կթելու ժամանակ, և կրծից աղիքային միկրոօրններն ընկնում են կաթի մեջ: Այդպիսով կովի կաթը հենց կթելու ժամանակ կարող է կեղտոտվել աղիքային միկրոօրններով: Գրանից հետո միկրոօրններով կեղտոտված՝ նոր կթած կաթը, տաք տեղ դնելու դեպքում, միկրոօրների քանակը նրա մեջ արագորեն մեծանում է:

Յեթե կաթն առանց չեռացնելու տան յերեխային, այդ միկրոօրնները կընկնեն յերեխայի աղիքները:

Կաթը յեռացնելուց միկրոօրններն սպանվում են, դրա համար ել չեռացրած կաթն այդ տեսակետից անվտանգ է, յեթե միայն յեռացնելուց հետո նա նորից չի կեղտոտվում միկրոօրններով:

Հազվադեպ չէ, վոր յեռացրած կաթը միկրոօրններով կեղտոտվում է ճանճերի միջոցով: Ճանճերը նստում են գոմաղբի վրա, լինում են արտաքնոցներում, կեղտոտա ջրերի ու աղբի հորերում և միկրոօրններով կեղտոտում իրենց թաթիկներն ու կնճիթը. դրանից հետո նրանք նստում են մթերքների վրա, կաթի վրա և նրանց կեղտոտում այդ միկրոօրններով:

Յեթե ճանճերը նստում են ամանների վրա—բաժարի, պնակի, գդալի և այլն, նրանց ևս նրանք կեղտոտում են վարակիչ հիվանդութիւնների միկրոօրններով: Այսպես են ճանճերը փոխանցում զանազան վարակիչ հիվանդութիւնները, այդ թվում նաև ամառային լուծերը:

Բացի կեղտոտված կաթից, յերեխաներն աղիքային միկրոբներով կարող են վարակվել նաև ջրի միջոցով:

Հաճախ ջուրը սենյակում թողնում են բաց դուշլեբի մեջ: Բաց դուշլեբում պահվող ջրի մեջ ճանճեր են ընկնում: Հաճախ դուշլի մեջ վորեւ բան է ընկնում՝ գավաթ, շերեփ կամ մի այլ բան, վորը հանում են կեղտոտ ձեռքերով: Բավական է այդպիսի ջրով լվանալ ծծակը, ամանը կամ յերեխայի յերեսը, միկրոբները կընկնեն յերեխայի բերանը, իսկ ախտեղից՝ նրա աղիքները:

Միկրոբները շատ արագ են բաղմանում. մեկ միկրոբից կարճ ժամանակամիջոցում ստացվում են միլիարդավոր միկրոբներ:

Ե՛լ ավելի մեծ վտանգ է սպառնում յերեխային, յերբ նա սողում է հատակին, վորտեղից կեղտոտ վտաններով անցնում են մարդիկ ու կենդանիները: Կենդանիները, վոչ հազվադեպ, իրենց հետևից հատակի վրա կղանք են թողնում:

Կեղտը, վորի մեջ միշտ էլ հսկայական քանակութեամբ միկրոբներ են լինում, կարող է ընկնել յերեխայի աղիքները, վորովհետև յերեխան սովորաբար դեպի բերանն է տանում հատակից բարձրացրած՝ կեղտոտված առարկաները:

Միկրոբները կարող են յերեխայի բերանն անցնել նաև նրան խնամող մոր, քրոջ կամ դայակի ձեռքերի միջոցով, յերբ նրանք փոխելով հիվանդ յերեխայի կեղտոտ բարուրը և դրանից հետո ձեռքերը չլվանալով՝ կերակրում են առողջ յերեխայի, բարուրում են, ծծակ են տալիս կամ լողացնում նրան:

Յեթև լուծերն առաջանում են մսուրներում վոր-

տեղ վատ է դրված յերեխաների խնամքը, և վորտեղ չեն պահպանվում սանիտարական կանոնները, այն ժամանակ մեկ լուծով հիվանդանալուն հետևում են մի արք ուրիշ լուծային հիվանդութեւններ—առողջ յերեխաները վարակվում են լուծով հիվանդ յերեխաներից:

ՅԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՎԱՏ ԽՆԱՄԵԼԸ ՅԵՎ ԱՆԿԱՆՈՆ
ԿԵՐԱԿՐԵԼԸ ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ԼՈՒԾԱՅԻՆ
ՀԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Վորպեսզի յերեխան կանոնավոր աճի ու զարգանա, նա պետք է կանոնավոր սնվի: Կանոնավոր սնվել՝ նշանակում է իր ժամանակին ստանալ հարկավոր քանակութեամբ անհրաժեշտ սնունդը: Բացի դրանից, անհրաժեշտ է, վոր կերածը լավ մարսվի ստամոքսում ու աղիքների մեջ: Կերակուրն ստամոքսում և աղիքներում մարսվում է հատուկ մարսողական նյութերի միջոցով, վորոնք արտադրվում են մարսողական որգանների կողմից: Մարսված սնունդը ներս է ծծվում արյան մեջ և ծառայում մարմնի աճի և որգանների աշխատանքի համար:

Կերածը կարող է կանոնավոր մարսվել միայն այն դեպքում, յերբ նա իր քանակով ու վորակով համապատասխանում է փոքրիկ յերեխայի մարսողական որգանների տարիքային առանձնահատկութեւններին:

Ծծկեր յերեխաներն ամենից լավ մարսում են մոր կաթը, իսկ վատ՝ կովի կաթը, իսկ ավելի վատ՝ հացը և միսը: Վատ մարսվող սնունդը կարող է ինքնին

լուծ առաջացնել: Բացի դրանից, դժվարամարս կե-
րակուրն ազիքների մեջ բարենպաստ պայմաններ և
ստեղծում նրա մեջ ընկած միկրոբների բազմանալու
համար:

Ահա թե ինչու առանձնապես կարևոր է, վոր փոք-
րիկ յերեխաների սնուցումը ղեկավարի բժիշկը, և վոր
յերեխաներն առաջին հերթին ապահովված լինեն ան-
հրաժեշտ մթերքներով:

Մարդու որգանիզմի մեջ որգանների մի մասի աշ-
խատանքը սերտորեն կապված է մյուս որգանների
աշխատանքի հետ և որգաններից վորևե մեկի հիվան-
դանալը կամ փասվելն անդրադառնում է ամբողջ
որգանիզմի վրա: Փոքրիկ յերեխան առանձնապես
զգայուն է դեպի արտաքին ազդեցությունները: Յե-
թե նա յերկար ժամանակ պառկած է թաց ու սառը
բարուրի մեջ, ապա դրանից տուժում է վոչ միայն
նրա մաշկը, այլև ամբողջ որգանիզմը՝ խանգարվում
է արյան շրջանառությունը, անկանոն է կատարվում
տաքության բաշխումն որգանիզմում, իջնում է վա-
րակիչ հիվանդությունների միկրոբների նկատմամբ
որգանիզմի ունեցած դիմադրողականությունը: Թու-
լանում է ամբողջ որգանիզմի աշխատանքը, այդ
թվում նաև մարսողական որգաններինը: Կերակուրը,
վորը մինչև այդ յերեխան լավ տանում եր, կարող է
նրա մոտ լուծալին հիվանդություն առաջ բերել: Յե-
րեխայի մարմինը շատ տաքացնելու դեպքում ևս հա-
ճախ առաջ են գալիս ստամոքսաաղիքային խանգա-
րումներ:

Այդպես շատ տաքանալը կարող է առաջանալ յե-
րեխային չափից դուրս փաթաթելուց, ծանր ոգոճ


սենյակում կամ թե արևի այրող ճառագայթների տակ
մնալուց:

ԱՅՆ ՅԵՐԵՆԱՆԵՐԸ, ՎՈՐՈՆՔ ԿԵՐԱԿՐՎՈՒՄ ԵՆ ԿՈՎԻ
ԿԱՌՈՎ, ԱՎԵԼԻ ՀԱՃԱՍ ԵՆ ՀԻՎԱՆԳԱՆՈՒՄ ԼՈՒԾՈՎ

Կոնսուլտացիայում բժիշկները հատկապես խոր-
հուրդ են տալիս մայրերին, վոր նրանք յերեխանե-
րին կրժքով կերակրեն և կրժքից չկտրեն զարնան կամ
ամուսն ամիսներին, վորովհետև արհեստական կերա-
կըման ժամանակ յերեխաներն զգալիորեն ավելի
շատ են հիվանդանում և մեռնում, քան կրժքով կե-
րակրելու ժամանակ:

Այդ կատարվում է յերկու պատճառով: Առաջին՝
կրժքով կերակրելու դեպքում յերեխան ավելի ամրա-
կազմ ու առողջ է աճում: Մայրական կաթը լավա-
զույն սնունդն է ծծկեր յերեխայի համար: Նա հեշ-
տությամբ է մարսվում և ներծծվում: Կովի կաթը
դժվարությամբ է մարսվում: Կովի կաթի մարսելը
մեծ ու դժվար աշխատանք է ծծկեր յերեխայի ստա-
մոքսի ու աղիքների համար: Յերկրորդ՝ կենդանիներ
(այծի, վոչխարի, կովի) կաթը շատ հեշտությամբ
է կեղտոտվում միկրոբներով: Կրժքով կերակրելու
դեպքում միկրոբները կարող են կերակրելիս յերե-
խայի բերանն ընկնել միայն այն դեպքում, յերբ
մայրը կերակրելուց առաջ ձեռքերն ու կուրծքը լվա-
նում է վոչ բավականին մաքուր ջրով:

Վորքան թույլ է յերեխան, այնքան ավելի վտան-
գավոր են նրա համար միկրոբները և այնքան ավելի
հեշտ է հիվանդանում նա լուծով:



Նկ. 3. Կրժքով կերակրած
առողջ յերեխան

ԱՄԱՌԸ ՅԵՐԵԽԱՆՆԵՐՆ ԱՎԵԼԻ ՀԱՃԱՆ ԵՆ
ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ԼՈՒԾՈՎ

Միկրորեները կարող են աճել ու բազմանալ միայն տաքութեան մեջ: Տաքութեան և նրանց համար համապատասխան պայմաններում յուրաքանչյուր մեկ միկրորդ արագորեն բազմանում է և վերածվում միկրորենների մասսայի: Յեթե տաք յեղանակին մասշտաբը և կաթը փչանում են մեկ օրից հետո, ապա շոգ յեղանակին այդ բանը կատարվում է մի քանի ժամվա

կրժքով կերակրելու դեպքում յերեխան ավելի ամրակազմ է և դիմացկուն (նկ. 3): Յեթե միկրորեններն ընկնում են են նրա ստամոքսն ու աղիքները, նրանք այնպիսի վնասակար ազդեցութիւն չեն ցուցնում տալիս, ինչպես արհեստական կերակրման ժամանակ. այդ պատճառով կրժքի կաթը պաշտպանում է յերեխային վոչ միայն լուծներից, այլև ուրիշ հիվանդութիւններից:

ընթացքում. դրա համար ել ամառվա շոգն այդպես վտանգավոր է փոքրիկ յերեխաների համար:

Բացի դրանից, ամռանը, փոշու և ճանճերի շնորհիվ, միկրորենները հեշտութեամբ են ընկնում սննդի մեջ:

Մեծ նշանակութիւն ունի այն հանգամանքը, վոր յերեխայի որդանիզմը թուլանում է շոգին: Շոգը թուլացնում է նաև չափահաս մարդուն: Յերեխան ափահասից ավելի սաստիկ է տանջվում շոգից ու տոթից: Փողոցում շոգ է, արևն այլում է, յերեխան յերկար ժամանակ մնում է տոթ սենյակում: Պաշտպանելով յերեխային ճանճերից, վորոնք մտնում են նրա քիթը, բերանը, ականջները՝ մալրը հաճախ դնում է նրան օրորոցը կամ ճոճը և ծածկում առագաստով (մժեղարգել, մրչագղամա): Յերեխան առագաստի տակ ել ավելի յե խեղդվում շոգից, նա պառկած է՝ քրտինքից ամբողջապես թրջված, գունատ, թառամած, թուլացած: Քրտինքի հետ յերեխան շատ ջուր է կորցնում, վորն անհրաժեշտ է նրա որդանիզմի համար: Ջրի զգալի կորստից յերեխան նահարում է ու թուլանում: Մենք լավ գիտենք, թե վորքան մեծ է խմելու պահանջն ամառ ժամանակ: Աշխատանքի մեկնելով դաշտ՝ գյուղացիները միշտ ել ջրի կամ այլ խմելիքի պաշար են վերցնում իրենց հետ: Փոքրիկ յերեխան շատ է շարժվում, կյանքի առաջին ամիսներին նա համարչա անընդհատ շարժում է վոտքերն ու ձեռքերը, առաջին տարվա վերջին նա սողում է (չոչ է անում—չորեքթաթ գնում), վոտքի լե կանգնում, վազում և այլն: Այդ բանը պետք է հաշվի առնել և հիշել, վոր յերեխան, ինչ-

3006
85



պես և չափահասը, շատ ե շարժվում և ամառ ժամա-
մանակ խմելու մեծ կարիք ունի: Դրա համար ան-
հրաժեշտ ե, բացի կաթից, յերեխային տալ լեռացրած
սառը ջուր: Յերեխան առանց խմելու դառնում ե
թույլ, թառամած և նրա համար վտանգավոր միկ-
րոբների հանդեպ պակաս դիմացկուն:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԸՆԹԱՆՈՒՄ ԼՈՒՄԵՐԸ ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ՄՈՏ

Վոչ բոլոր յերեխաների մոտ ե ամառային լուծը
միատեսակ սկսվում և վոչ բոլորի մոտ միատեսակ ըն-
թանում: Հիվանդության ընթացքը կախված ե տար-
բեր պայմաններից:

Տարիքից: Ինչքան փոքր ե յերեխան, այնքան ավե-
լի ծանր ե ընթանում նրա մոտ լուծը, այնքան ա-
վելի վտանգավոր ե լուծը նրա կյանքի համար, այն-
քան ավելի դանդաղ ե կազդուրվում յերեխան:

Յերեխայի առողջության վիճակից: Յեթե յերեխան
լուծից առաջ հիվանդացել ե վորեք ուրիշ հիվանդու-
թյամբ, որինակ՝ գրիպով, կարմրուկով, ռախիտով,
ապա լուծը նրա մոտ հաճախ շատ ծանր ե ընթանում
և կարող ե արագ կերպով մահվան հասցնել:

Խնամքից: Յեթե լուծով հիվանդ յերեխան պառկած
ե ծանր ողով, կեղտոտ սենյակում, յեթե նրան ան-
հանգստացնում են փայտօջիխները, ճանճերն ու այլ
միջատներ, յեթե նրան քիչ են տալիս խմելու, նա կա-
րող ե շատ շուտ մահանալ:

Սննդից: Կրծքի կաթը լավագույն դեղն ե լուծի
դեմ:

ՊԱՅՔԱՐ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԼՈՒՄԵՐԻ ԴԵՄ

Պայքար ամառային լուծերի դեմ պետք ե տարվի
յերկու տեսակի միջոցներով. պետք ե հոգալ յերեխա-
յին կանոնավոր սնելու մասին, նրան լավ խնամելու
մասին, դրանով մենք կհասնենք մանկական որգա-
նիզմի մեծ դիմացկունությանը միկրոբների նկատ-
մամբ: Դրա հետ միասին պետք ե պաշտպանել յերե-
խային՝ միկրոբները նրա որգանիզմի մեջ մտնելուց:

Կարող ե արդյոք յերեխան ամրակազմ ու առողջ աճել,
յեթե նա ծնված որից անկանոն ե կերակրվում, յեթե նա
մեծանում ե ծանր ողում, շնչելով չորափոխած սե-
նյակի փչացած ողը: Յերեխան չի կարող ամրակազմ
ու առողջ աճել, յեթե մայրը լավ չի խնամում նրան,
յեթե զբոսանքի չի հանում նրան մաքուր ողում,
վորն այնքան անհրաժեշտ ե յերեխայի համար:

Վատ խնամքը, անբավարար արևն ու վոչ մաքուր
ողը հասցնում են այն բանին, վոր յերեխան նվազ
ու գունատ ե աճում, հեշտությամբ հիվանդանում
զանազան հիվանդություններով, այդ թվում նաև
լուծերով:

Ի՞նչպես կարելի յե հաջող պայքար տանել կեղտի
ու ճանճերի վարակը տեղափոխողների դեմ, յեթե
սենյակին շատ մոտ ե անասնաբակը, վորտեղ շատ
գոմաղը կա: Գոմաղը բարեհաջող տեղ ե ճանճերի
դուրս գալու համար. իսկ ճանճերը, ինչպես մենք
գիտենք, իրենց թաթիկներով բազմաթիվ միկրոբներ
են տեղափոխում դեպի բնակարանները, կեղտոտում
սնունդն ու խմելիքը:

Կոտնտեսություններն անհրաժեշտ պայմաններ են

ատեղծում լայն սանիտարական-առողջապահական միջոցներ կիրառելու համար: Այդ պայմանները չկային մենատնտեսութուններում: Կոլտնտեսութուններում ստեղծվում է նոր, առողջ կենցաղ: Կոլտնտեսութուններում կատարվում է առողջ, լուսավոր ընակարանների, մսուրների, հասարակական ճաշարանների, բաղանիքների ու լվացատների հսկայական շինարարութուն: Կոլտնտեսութունները հնարավորութուն ունեն կանոնավոր պայքար կազմակերպելու ձանձերի դեմ՝ լավ անասնաբույժներ, փակ աղբահորեր, գոմաղբարաններ սարքելու միջոցով, կոլտնտեսութունները կարող են իր ժամանակին հեռացնել գոմաղբը: Յեվ, վերջապես, միայն կոլտնտեսութունները կարող են յերեխային հատկացնել ընդարձակ, լուսավոր շենքեր, ապահովելով կոլտնտեսային մսուրներում կանոնավոր սնունդը, խնամքը և յերեխաների դաստիարակութունը: Յեթե մանկամսուրները լավ են աշխատում, նրանք հանդիսանում են մանկան առողջության դարձնողները, առողջ պայմաններ են ստեղծում յերեխայի համար հենց մսուրներում, դրա հետ միաժամանակ սանիտարական-կուլտուրական և լուսավորական լայն աշխատանքներ են տանում կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների լայն մասսաների մեջ: Յուրաքանչյուր կոլտնտեսութուն պետք է կազմակերպի իր մսուրը:

Միայն կոլտնտեսութուններում կան բոլոր հնարավորութունները, աշխատանքի ու կենցաղի պայմանները, հաջողությամբ առողջացնելու, վարակիչ հիվանդութունների դեմ գյուղական վայրերում հաջողությամբ պայքարելու համար:

ՄՍՈՒՐՆԵՐՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԼՈՒՄԵՐԻ ԳԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅԲԱՐՈՒՄ

Մենք արդեն ցույց ենք տվել, վոր կրճքով կերակրելու դեպքում յերեխաներն ավելի քիչ են հիվանդանում ամառային լուծով. դրա համար, առաջին և հիմնական պահանջը՝ լուծերի դեմ մղվող պայքարում՝ յերեխաներին մայրական կրծքի կարավ ասպակով ե: Յերեխան չպետք է զրկվի կրճքի կաթից նրա համար, վոր մալրն աշխատում է դաշտում: Ծծկեր յերեխաները, վորոնք զրկված են մայրական կաթից և թողնված տանը՝ մանկահասակ դայակների և անաշխատունակ պառաֆների խնամքին, կարող են հեշտությամբ հիվանդանալ ամառային լուծերով: Բացի դրանից, անթույլատրելի չեն նաև այն, վոր կոլտնտեսուհին չմասնակցի գարնանացանի, քաղհանի և բերքահավաքի կամպանիաներին նրա համար, վորովհետև ծծկեր յերեխա ունի: Կոլտնտեսութունները հնարավորութուն ունեն յերեխաներին մայրական կաթով ապահովելու (կրճքով կերակրելու), առանց ֆլաստիկ իրենց տնտեսական շահերին: Յեթե կոլտնտեսութան մեջ կա թեկուզ 8—10 ծծկեր յերեխա, անհրաժեշտ է նրանց համար մոր աշխատանքի տեղում դաշտային շարժական մսուր կազմակերպել: Դաշտային շարժական մսուրների կազմակերպումն առաջին և հիմնական խնդիրն է ամառային լուծերի դեմ պայքարելու գործում: Իսկ յեթե կոլտնտեսության մեջ աշխատող մալրերի ծծկեր յերեխաները քիչ են՝ 3—4 հոգի, և դաշտային մսուրներ կազմակերպելն աննպատակահարմար է, պետք է այնպես անել,

վոր մայրերն աշխատեն սովորական մսուրներին մոտ
և կարողանան կրծքով կերակրել իրենց յերեխանե-
րին:

Ամառային լուծերի դեմ պայքարելու կարևոր միջոցը
մսուրներում յերեխաների սնունդը կանոնավոր կազ-
մակերպելն է՝ մտցնելով այնտեղ լավ պատրաստված
մսունք, վորը պետք է ընտրված լինի յերեխայի հա-
սակին համապատասխան և միկրոբներով աղտոտված
չպետք է լինի: Հատուկ ուշադրութուն պետք է
գարձնել կաթի վրա: Վոչ մի դեպքում չի կարելի
յերեխաներին հում կաթ խմեցնել: Կաթը վոչ միայն
պետք է յեռացնել, այլև յեռացրած կաթը պետք է
պահել սառը տեղում և լավ փակվող կափարիչ ունե-
ցող ամանի մեջ, վորպեսզի կաթը չաղտոտվի: Ամե-
նից լավ է կաթը յեռացնել ուղղակի շշերի մեջ և այդ
շշերով ել պահել սառը տեղ: Այդ դեպքում կարիք
չի լինի բաժանելուց առաջ կաթը դատարկել, քանի վոր
դրանից կաթը կարող է աղտոտվել: Յերեխաներին
պետք է կերակրել վորոշ ժամերի, ամբողջ որվա
ընթացքում, մի կերակրումից մինչև մյուս կերակրու-
մը յերեխաներին պետք է տալ յեռացրած սառը ջուր:
Հում բանջարեղենն ու մրգերը պետք է լավ լվանալ
յեռացրած ջրով և տալ նրանց վորոշված ժամերի, կե-
րակրելուց անմիջապես հետո:

Մսուրները պետք է ապահովեն յերեխաների լրիվ
սնունդն ամբողջ որվա համար:

Յերեխայի մարմինը չափազանց տաքացնելը թու-
լացնում է նրան, դրա համար մսուրները չպետք է
թույլ տան չափից ավելի տաքացնել: Տոթ սենյա-
կում ավելի հեշտ է չափից ավելի տաքացնել յերե-

խային, քան բաց ոդում, դրա համար յերեխաներն
ամառ ժամանակ ամբողջ որը պետք է անցկացնեն
բաց ոդում, ծառերի ստվերի տակ, իսկ յեթե մո-
տակայքում այգի չկա՝ ծածկի տակ: Շոգ ժամանակ
անհրաժեշտ է դոնե որական մեկ անգամ յերեխայի
վրա գուլ ջուր լցնել (ջուրը պետք է լինի նոր կթած
կաթի ջերմության): Դրա համար պետք է դուշեք
սարքել, իսկ վոր-
տեղ այդ դժվար
է անել, պետք է
յերեխաների վրա
ջուրը լցնել ցնցու-
ղով կամ սափորով
(նկ. 4):

Չի կարելի յերե-
խային շատ տաք
հագցնել. պետք է
հագցնել բաց գույ-
նի ազատ հագուստ:
Ավելի լավ է փոք-
րիկ յերեխաներին
թողնել միայն շա-
պիկով, իսկ մի քիչ
մեծերին՝ միայն
վարտիքով:



Նկ. 4. Յերեխայի վրա ցնցուղով ջուր
լցնելը

ՅԵՐԵՒԱՆԻ ԼԱՎ ԽՆԱՄՔԸ ՄԵԾ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒ ՈՒՆԻ
ԱՄԱՌՈՒՅԻՆ ԼՈՒԾԵՐԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Ամեն տեղ պետք է մաքրութուն պահպանել: Յե-
րեխային շրջապատողները և ինքը՝ յերեխան պետք է

մաքուր իննն: Յուրաքանչյուր յերեխա պետք է ուտի առանձին մաքուր ամանից: Անհրաժեշտ է ամանը լվանալ յեռման ջրով ու պահել փակ պահարանում, վորպեսզի չփոշոտվի և վրան ճանճեր չնստեն: Հատկապես խնամքով պետք է լվանալ փոքրիկ յերեխաների ծծակներն ու փոքրիկ շշերը:

Մսուրներում աշխատողներին և յերեխաների ձեռքերն անպայման պետք է լվանալ ուտելուց առաջ:

Կեղտոտված ու թրջված շորերը (բարուրը) պետք է հավաքել առանձին, լավ փակած բաքերի մեջ ու տալ լվանալու և վոչ թե չորացնել:

Անհրաժեշտ է համառ կերպով պայքարել ճանճերի դեմ: Մսուրի բակը պետք է մաքուր պահվի: Կեղտոտ ջրերի և աղբի հորերը պետք է լավ ծածկել կափարիչով: Արտաքնոցներում ամեն որ պետք է կիր, մոխիր կամ հող ցանել: Շենքի լուսամուտներին պետք է դնել բարակ ցանցալարով կամ մառվալով պատած փեղկեր: Յերեխաների ուտելուց հետո անհրաժեշտ է խնամքով հավաքել փշրանքներն ու սենյակը մաքրել:

Բացի այս ընդհանուր սանիտարական-հիգիենիկ կանոնները կատարելուց, յուրաքանչյուր մսուրային աշխատող պետք է ուշադրությամբ հետևի յուրաքանչյուր յերեխայի առողջության վիճակին: Առանձին ուշադրությամբ պետք է հետևել այն թույլ յերեխաների առողջությանը, վորոնք հիվանդացել են մոտանցյալում. նրանց պետք է առանձնացնել հատուկ ուշադիր խնամքի համար:

Յուրաքանչյուր զկուտոց, յուրաքանչյուր փախում, յուրաքանչյուր լուծային կղում իր ժամանակին պետք

է նկատի մսուրում աշխատող քույրը: Լուծ ունեցող յերեխային անհրաժեշտ է իսկույն ևեթ առանձնացնել առողջ յերեխաներից. դրա համար, մինչև բժշկի գալը, նրան պետք է տեղավորել առանձին սենյակում (մեկուսարան) և պահպանել անկողնում: Յուրաքանչյուր մսուրում պետք է անպայման առանձնացվի այդպիսի մեկուսարան:

ՏԱՆՆ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՇՏՊԱՆԵԼ ՅԵՐԵՃԱՆՆԵՐԻՆ ԼՈՒԾԻՅ

Մսուրների բոլոր նվաճումները, յերեխայի ամբողջ բարեկեցությունը կարող են ի չիք դառնալ, յեթե մայրը տուն տանելով յերեխային՝ չկատարի այն բոլոր կանոններն ու նախազգուշացումները, վորոնք անհրաժեշտ են յերեխային լուծից պաշտպանելու համար:

Մսուրում աշխատողները պարտավոր են մայրերին տալ դրա համար անհրաժեշտ բոլոր խրատներն ու հրահանգները և հետևել, վոր իրենց տված բոլոր ցուցումները կատարվեն:

Բոլոր տարրական սանիտարական-առողջապահական միջոցները, վորոնք կարող են և պետք է կիրառվեն հենց իրենց՝ աշխատավորների կողմից, կոչվում են սանիտարական միջոցառում: Սանիտարական միջոցառում անհրաժեշտ է կիրառել կենցաղում և աշխատանքի մեջ: Սանիտարական միջոցառումը մայրերի համար՝ յերեխայի լուծերը կանխելու նկատմամբ՝ կլինի հետևյալը.


1. Յերեխային միշտ պետք է մոտենալ մաքուր

հագուստով և լվացած ձեռքերով, ձեռքերի վրա, հատկապես յեղունգների տակ, կարող են վարակիչ հիվանդությունների միկրոօրններ լինել:

2. Ծծկեր յերեխաներին, բացի կրծքի կաթից, առանց բժշկի խորհրդի վոչինչ չտալ տանը:

3. Մսուրներից ստացած լրացուցիչ սնունդը պետք է պահել սառու սեղ և այն ամանի մեջ, վորով բաց է թողնված մսուրից: Լրացուցիչ սնունդն ուրիշ, մանավանդ վոչ լավակահաչափ մաքուր ամանի մեջ լցնելիս, կարող են նրա մեջ վարակիչ հիվանդությունների միկրոօրններ ընկնել:


4. Անհրաժեշտ է, վոր յերեխաները լվացվեն կամ նրանց լվացվել տալ յեռացրած սառը ջրով:



Նկ. 5. Յերեխաները մսուրում

5. Անթուլլատրելի չէ յերեխային տալ այնպիսի խաղալիքներ, վոր անկարելի չէ լվանալ:

6. Խաղալիքը յերեխային տալուց առաջ պետք է լվանալ յեռացրած ջրով:



Նկ. 6. Յերեխաները մսուրում

7. Յեթե յերեխան խաղալիքը գցում է գետին կամ հատակին, պետք է նորից լվանալ:

8. Ամանը, գդալը, ծծակը, կեղծ ծծակը ճանճերից պաշտպանելու համար պետք է պահել մաքուր սրբիչի մեջ փաթաթած և ամեն անգամ գործածելուց առաջ յեռացնել կամ յեռման ջուր լցնել վրան:

9. Հացի կամ այլ ուտելիքի բոլոր փշրանքները սեղանի, նստարանի և հատակի վրայից պետք է ուշադրությամբ մաքրել հենց ուտելուց անմիջապես հետո:

10. Յերեխային չպետք է փաթաթել: Տաք յեղանակին կարելի չէ հագցնել միայն շապիկ կամ նույ-

նիսկ թողնել մերկ, մի շոր անցկացնելով վոտքերի արանքը: Այդպիսի թեթև հագուստը պաշտպանում է յերեխային չափազանց տաքանալուց:

11. Յերեխային պետք է ամբողջ որը բաց ողում պահել, ծածկելով մեղրագեղով (ПОЛОГ)՝ ճանճերից ու մոծակներից պաշտպանելու համար:

12. Անհրաժեշտ է գիշերները բաց թողնել սենյակի լուսամուտը կամ գոնե ողանցքը:

13. Թույլ չտալ, վոր յերեխաները սողան կեղտոտ հատակին:

14. Շոգ ժամանակ յերեխային պետք է հաճախ խմեցնել՝ գլալով յեփած սառը ջուր տալ առանց շաքարի:

15. Յերեխային պետք է ամեն որ լողացնել:

Վորպեսզի այս հասարակ կանոնները դառնան ամառային լուծերի դեմ պայքարելու իսկակա՛ն միջոցներ, պետք է հասնել այն բանին, վոր վոչ միայն մայրերը, այլև բոլոր կուլտնտեսականներն ու կուլտնտեսուհիները լավ յուրացնեն այս կանոնները և կատարեն: Դրա համար մսուրները պետք է ամենուրյա սանիտարական-լուսավորական աշխատանքներ տանեն կուլտնտեսութ՛յան բնակչութ՛յան հետ, բացատրեն այս կանոնների իմաստն ու նշանակութ՛յունը և ցույց տան, թե ինչպես պետք է դրանք կիրառել կյանքում:

ԼՈՒԾՈՎ ՀԻՎԱՆԴԱՅԱԾ ՅԵՐԵՍԱՅԻՆ ՅՈՒՅՅ ՏՐՎՈՂ
ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Հին գյուղական կենցաղում, յերբ յերեխան հիվանդանում էր լուծով, սպասում էին՝ զբուցե վաղը թե-

թեան՝, հետո սկսում էին յերեխային ըստ իրենց բուժել, հաճախ տանում էին յեկեղեցի «հաղորդելու», և յերբ յերեխան հաղիվհաղ վողջ էր, նոր միայն ցույց էին տալիս բժշկին:

Մեռնող յերեխային, վորը թունավորված է մեկրորային և այլ թույներով, վորոնք զարգանում են նրա հիվանդ որգանիզմում, ամենալավ բժիշկն անգամ դժվարութ՛յամբ կփրկի: Հիվանդութ՛յունը պես է բրձրեկել խելացիաբեն հենց սկզբից, հիվանդացած յերեխային պես է անմիջապես ցույց տալ բժեկին:

Լուծը ծանր հիվանդութ՛յուն է, նա կարող է յերեխային 3 որում սպանել: Թանգ է յուրաքանչյուր բոպեն, պետք է կարողանալ յերեխային ոգնել մինչև բժշկի նայելը:

Առաջին ոգնությունը յուծի ժամանակ—հանգիստ տալ ստամոսին ու աղիքներին: Մենք գիտենք, վոր մարսողական խողովակում մեծ աշխատանք է կատարվում կերակուրը մարսելու համար: Պետք է ազատել ստամոքսն ու աղիքներն աշխատանքից՝ զրկել յերեխային ուտելիքից, թողնել, վոր նա 6—12 ժամ քաղցած մնա:

Գաղցի ժամանակ յերեխային վոչ միայն կովի կարչպես է տալ, այլև կրծով էլ չպես է կերակրել. անհրաճես է խմեցնել յեռացած սառը ջուր՝ առանց ռաֆի:

Ջուրը պետք է տալ քիչ-քիչ, բայց հաճախ, այն հաշվով, վոր քաղցի ընթացքում յերեխան խմի վոչ պակաս քան յերկու բաժակ ջուր: Կարելի է խմեցնել ծծակով և գլալով, միայն թե յերեխան խմի: Ավելի լավ է ջուրը նախապես սառեցնել, նրա համար

յեռացրած ջուրը լցնում են լավ վացած ջրամանի (գրաֆին), սափորի, կժի կամ շի մեջ և դնում սառցի վրա կամ սառը (ջրհորի) ջրի մեջ: Պետք է հետևել, վոր այդ ժամանակ չեռացրած, հում ջուր պատահմամբ չլցվի յեռացրածի մեջ:

Լուծով հիվանդացած յերեխային չպետք է գրկել: Նրան պետք է պառկեցնել մաքուր անկողնում, բանալ լուսամուտները, վորպեսզի հեշտ շնչի, կամ թե դուրս բերել մաքուր ոդ, սովերի մեջ, ծածկելով ճանճերից: Յերեխային փաթաթել հարկավոր չէ: Յեթե յերեխայի վոտքերը սառն են, պետք է տաքացնել ջեռոցով (գրեկա): Իբրև ջեռոց կարող է ծառայել տաք ջրով լցված և խցանով լավ փակած մաքուր շիշը: Ջեռոցը պետք է դնել վերմակի վրայից: Յերեխայի մաշկը չափազանց քնքուշ է և անզգուշության հետևանքով հեշտությամբ կարելի յե այրել ջեռոցով:

Քաղցից Չ ժամ անց պետք է քիչ-քիչ կերակրել յերեխային:

Վավագույն սնունդը կրծքի կաթն է: Հիվանդ յերեխային կրծքի կաթը պետք է տալ վոչ կրծքից, այլ նախապես քամելով ու սառցնելով, գդալով՝ յուրաքանչյուր Չ ժամը մեկ անգամ, Չ-ական թեյի գդալ:

Յեթե յերեխան կրծքից կտրված է, կանացի կաթը պետք է խնդրել ուրիշ կնոջից, կրծքով կերակրող առողջ մո ից: Յուրաքանչյուր գիտակից մայր պետք է հասկանա, վոր կրծքի կաթը լավագույն դեղն է լուծի ժամանակ և այնպիսի փոքր քանակությամբ կրծքի կաթից, ինչպես $\frac{1}{4}$ —1 բաժակ կաթն է, հաճախ կախված է յերեխայի կյանքը, դրա համար վոչ մի կերակրող մայր չպետք է մերժի կրծքի կաթ տալ

հիվանդ յերեխայի համար: Յեթե կրծքի կաթ ճարելը չի հաջողվում, պետք է վերցնել յերեսը քաշած կովի կաթ, խառնել նույն չափով յեռացրած ջրի հետ, լավ յեռացնել, սառցնել և տալ այնպես, ինչպես կրծքի կաթը:

Կաթով կերակրելու ընդմիջումներին պետք է առատորին ջուր տալ, այնուհետև յերեխային անպայման ցույց տալ բժշկին և առանց նրա խորհրդի վոչինչ չանել:

Լողացնել յերեխային լուծի ժամանակ վոչ միայն կարելի չէ, այլև հարկավոր է: Լուծային կղանքը չափազանց ուտիչ է և կարող է արագորեն ծանր պառկելախոցեր առաջացնել, վորոնց բուժելն ավելի դժվար է, քան կանխելը: Իացի դրանից, պետք է հետևել, վոր յերեխան չպառկի թաց ու կեղտոտ վիճակում: Կեղտոտ շորերը չի կարելի գցել հատակին: Պետք է իսկույն և եթ հաճաքել ու մինչև լվանալը պահել փակ դուլլի կամ բաօի մեջ, այլապես ճանճերն այդ վարակը կփոխանցեն ուրիշ յերեխաների: Ամեն անգամ յերեխային լվանալուց և կեղտոտ շորերի հետ շփվելուց հետո պետք է խնամքով լվանալ ձեռքերը, այլապես կեղտոտ ձեռքերով կարելի յե վարակել թե իրեն և թե ուրիշներին:

Ամառային մանկական լուծերի դեմ մղվող հաջող պայքաբը—այդ պայքար է վոչ միայն մանկական հիվանդացումներն ու մահացություններն իջեցնելու, այլև պայքար է կոլտնտեսուհու աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպական ամրապնդման համար:



Կյանքի պայմանները բարելավման հետ միասին,
վորի մեջ ապրում են մեր յերեխաները, Խորհրդային
Միության մեջ տարեցտարի պակասում են յերեխա-
ների՝ վարակիչ հիվանդություններով հիվանդանալու
և զբանցից մեռնելու դեպքերը: Սակայն մանկական
վարակիչ հիվանդությունները, այդ թվում նաև ամա-
ռային լուծը, դեռևս տարածված են մեզ մոտ:

Առողջապահական բաժինները, հիվանդանոցները,
բուժարանները, կոնսուլտացիաները և իրենց՝ աշխա-
տավորների համառ աշխատանքով մենք կհասնենք
այն բանին, վոր մեր յերկրում, հաղթանակած սո-
ցիալիզմի յերկրում, մանկական վարակիչ հիվանդու-
թյուններ բոլորովին չլինեն:

Ռուսերենի 5-րդ, ուղղված հրատարակությունից
Թարգմ. Ավ. Շ ա թ ի բ յ ա ն
Պատ. խմբադիր՝ Լ. Ս ա ռ մ ա ն դ ա ռ յ ա ն
Լեզվական խմբադիր՝ Հ. Պ ե տ ռ ո ս յ ա ն
Տեխ. խմբադիր՝ Լ. Ո հ ա ն յ ա ն
Սրբագրիչ՝ Ք ա ռ . Հ ա կ ո բ յ ա ն
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. Շ ա հ բ ա զ յ ա ն

Փլավլիտի լիտզոր՝ Դ—3629 Հրատ. № 4601

Պատվեր 417. Տիրաժ 3000.

Թուղթ. 72×105 Տպագր. 2 մամ.

Մեկ մամ. 25,600 նշան. Հեղինակ. 1,20 մամ.

Հանձնված է արտադրության 27 ապրիլի 1938 թ.

Ստորագրված է տպագրության համար 20 մայիսի 1938 թ.

«Ազգային գրադարան»



NL0279750

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

308

5948

А. И. ДОБРОХОТОВА

Как уберечь детей

от

летних поносов

Гиз Арм. ССР, Ереван, 1966